

Այս առաւօտ բացուեցաւ	11,13
կէս օրին	11,13
Բաւական երկարութիւն	Փր. 38 75
Թաղապարտ	Ժր. 770
Թարաւայ	Օտ. Ժր. 3,40

ԲՆԹԱՅԻ ԱՐԺԱՆԻՅԱՆ	
30 Յունվար	
Ստիւտիոյ Ժ. Զեյնալի բաժ. Անդր. Ժր. 4,4	
• Բոլորականութեան	3,5
Կ. Պոլսոյ Պատրիարքին	6 5
Գրէտի Ժ. Զեյնալ	3,35
Գոյս. 1863	Ֆր. 60
• 1865	• 62
• 1869	• 62 25
• 1872	• 18
• 1873	• 54

ԲՆԹԱՅԻ ԴԱՐԱՆԻ	
31 Յունվար	
Անդր. Ժր. 4,4	Վր. 8
Դարձուած ստիւտ	87 25
Ռեւոլյուցիոն Բաժ.	90 8
Ռեւոլյուցիոն Բաժ. 8 րոյ. 61 քարէք	
Դարձուած	Վր. 51 16
Մէտրոպոլիտոսի Բաժին	7 30
Հինգ շաբաթ	20 20
Մէտրոպոլիտոսի	20 40
Պրիւսի	425—410
• 5 վարանոց	410

Ա. Զ. ԴԱՐԱՆԻ

Երկրակայ թարգման առաջնորդ Դիմաքսեան Գեր. Պ. Հայկական Իր. վարդապետին երկրորդ կարգի Մէտրոպոլիտոսի պատուանշան տրուեցաւ:

Պրիւսիական առաջնորդ Գեր. Տ. Ղեւոնդ վարդապետին առաջնայեան երկրորդ կարգի Մէտրոպոլիտոսի պատուանշան տրուեցաւ:

Բոլորական վարժարանի տնօրէն Մ. Ժ. Վաչագանի երէկ Պատրիարքական դպրոցի Ժամա. մը չափ տեսակցեցաւ Ս. Պատրիարքին հետ, և 5 Օտ. ոսկի նուիրեց 'ի նպաստ սովորող:

Մեծապատիւ Տիգրան Ե. Գրիգոր Եկեղեցական Եփէնաթ Զինդ. օրինակ Մատիս նուիրեցին Հայաստանի ազգային գիւղական վարժարանաց:

Նմանապէս Մեծ. Յոսաննէս և Մկրտիչ Լասեան Եփէնաթ Զինդ. օրինակ Մատիս նուիրեցին Հայաստանի ազգային գիւղական վարժարանաց:

Մեծ. Խորոզով Եփէնաթ Պէյլէրեան մէկ օրինակ Մատիս նուիրեց Սեւանի ազգային վարժարանին:

Սեւանապոլսէն Մեծ. Յարութիւն Եփէնաթ Հարիկեան մէկ օրինակ Մատիս նուիրեց Զարա գիւղաքաղաքի ազգային վարժարանին:

Վանէն Տիւրքի Մեղու Հայաստանի լրագրին զրկուած թղթակցութեան մը մէջ հետեւեալ հասցեալը կը կարգւար:

« Բուսայ հիւպատոս Պ. Կամաւրական և Անդրիական հիւպատոս Պ. Կլէյտոնը (Բըլէյլըն) պատուական մարդիկ են: Սկզբում Կլէյտոն համակրում էր Բըլէյլընին, բայց տեսնելով այդ տարրի անպատասխանութիւնը, այժմ բոլորովին անհաստատ է Հայերին, և իւր զեկուցմանց (տեղեկագրաց) մէջ մեծ կարեւորութիւն է տալիս նրանց: Յայտնի բան է որ նորա վարմունքը կախում է իւր կառավարութեան ընթացքից: »

Ազգային Ռուսոն. Խորհուրդին հետեւեալ շրջաբերական ուղղած է առ թաղ. Խորհուրդ և վարժարանաց հոգաբարձութիւնս մայրաքաղաքին:

Մեծապատիւ Ատենապետ Էփ.

Ա.

Երկրակայ վարժարան Ռուսոնական Խորհուրդին Ազգ. դաստիարակութեան վերաբերեալ ընդհանուր և ծանր խնդիրներով բեռնաւորութեամբ Ազգ. վարժարանաց միջնակ ուղղութիւն մը տալու համար այցելու պաշտօնէից պէտք ըզգալով, այս անգամ իրեն օժանդակ եօթն անձերէ մասնախորհուրդ մը կազմեց և պաշտօն տուաւ անոր:

Ա. Այցելել Մայրաքաղաքին Ազգ. վարժարանները, հոկտ. 1873ին հըրատարակեալ վարժարանաց Բարեկարգութեան հրահանգին դորձագրութեանը, և Հոգաբարձութեանց ու Տեսչաց հետ խորհրդակցութեամբ բարեկարգութեան արժանի կէտերն որոշել և տեղեկագրել մինչ յառաջիկայ Մարտի վերջը:

Բ. Պատրաստել Ազգ. վարժարանաց վիճակագրութիւնն՝ որ պիտի պարունակէ տեսչաց, դասատուաց, դաստիարակ պաշտօնէից, ուսմանց, և դաստիարակ նկատմամբ կարեւոր տեղեկութիւններ:

Գ. Գծել Ազգ. վարժարանաց միջնակ ուղղութեան վերաբերեալ ծրագիրը:

Դ. Թաղային վարժարանաց վերաբերեալ որ և է խնդրոյ մասին խորհրդոյս կողմէ ընդունած յանձնարարութեան համաձայն զարգացնել անորին և տեղեկագրել խորհրդոյս ի դորձագրութիւն:

Արդ՝ Ռուսոնական Խորհուրդն ներկայ շրջաբերական դրով նորա կողմ օժանդակ մասնախորհրդոյ անդամաց անուանքն որք են՝

Աւետիս Էփ. Տ. Սահակեան	Գալուստ » Գուրաճեան
Երմիկ » Գալուստեան	Թադէոս » Երկանեան
Մկրտիչ » Վարժապետեան	Պոզոս » Գալապետեան
Քրիստոստոս » Դաւարոսեան	

Փութալով ծանօթացնել Ձեզ, անտարակոյս է որ պարտաւարտաճ ազգաւարութիւնն պիտի ուղղէք առ Տեսչութիւնը Մարդ. վարժարանաց, որպէս զի երբ Մասնախորհուրդն ի վարժարան ներկայանայ, ամեն դիւրութիւն ընծայուի անորեւ վարելու համար իւր պաշտօնն, որոյ նըպատակն է Հայ մանկուոյն օգուտը:

Բ.

Ս. Լիւմիսեան վեհապետ Հայրապետին հրամանաւ Մայր Աթոռոյ Գէորգեան ճեմարանի վարչութեան կողմէ անցեալ Դեկտ. ամսոյ 10 թ. ուսական հասած դրութիւն մը յանձնարարած ըլլալով ազգային Պատրիարքարանին ընտրել երկու ուշիմ բարեբարոյ և քաջաւոր զաւակներ, բնիկ Պոլսեցի 12 կամ 13 տարեկան լինելու պայմանաւ, վարժ ի հասարակ ընթերցում նուիրելու Հայերէն լեզուի և վայելչադրութեան, և պատուատուալ, Ռուսոնական Խորհուրդս կը յանձնարարէ որ բարեհաճի թաղային վարժարանէք կամ դրսէն այս հանգամանաց տէր աղքատիկ աշակերտ մը ընտրել և Ձեր վկայագրով յղել առ Խորհուրդս մինչև յառաջիկայ փետրվարի վերջը:

Գ.

Ըստ յանձնարարութեան Ամեն Սրբազան Պատրիարք Հօր, այս անգամ Մասնաւոր հասած պատասխանագիր մը կը յայտնէ թէ իշխան Նըն Արամէլիք Լազրէֆ ընդունած է իւր Լազարեան վարժարանի մէջ Տաճկաստանէն Հայ աշակերտ զրկուելու առաջարկութիւնը, որոյ համար հետեւեալ պայմանները նշանակուած են.

Ա. Խաբարանչիւր աղայի համար հարկ կըլլայ պատրաստել երեք վերկայական, մինը ծննդեան և միւր տութեանը՝ համար թաղական Դիւանատունէն, կամ միւրող քահանայէն և կամ նոյն եկեղեցւոյ միւրան քահանայից մէկէն, երկրորդ վկայականը բժշկէ մը ծաղիկէ պատուատուեալ լինելուն համար և երրորդը չըքսուր ծնողաց դատել ըլլալուն մասին տառնարկութեամբ յղեցնելու ստորագրութեամբ:

Բ. Այս երեք վկայականները իւրաքանչիւր ծնող իւր խնդրագրաւ ներկայացնելով ի Պատրիարքարան թող խնդրէ նորա տնօրէնութիւնը իւր զաւակը ընդունել տալու համար ի ճեմարանն Լազարեանց, որ ի Մասնաւոր մայրաքաղաքի Ռուսիոյ:

Գ. Երբ Պատրիարքարանի Դիւանատունը ընդունի աղայոց ծնողքէն այդ մտքով խնդիրներ, լաւ է որ Դիւանն ալ մակագրութեամբ վաւերացնէ վկայականաց ստորագրութեանց ճշտութիւնն ուրոյն ուրոյն և ամրացնէ իւր կնքովը:

Դ. Դիւանէք աղայոց յիշեալ վկայականները, երբ կանխաւոր կերպով կը պատրաստուի ծնողաց խնդրագրերովը հանդերձ, որքան Պատրիարք իւր յատուկ միջնորդական նամակաւ (Գաղղիքէն լեզուաւ) կուղարկէ ի ֆեթրապուրի առ իշխանն Արամէլիք Լազրէֆ, և կը խնդրէ որ առաջակայ Ռուսոնական տարւոյ սկիզբին, այսինքն օգուտոսին բարեհաճի ընդունիլ զաղայն, և եթէ ոչ ամենքը, դոնէ որքան աւել որ բացուելու լինի յետ տարեկան հարցաքննութեան ի 15 յունիսի 1880 ամիս:

Ե. Ընտրուելիք առողջ, աշխուրջ և աշխոյժ աղայք, լաւ է որ լինին ու լինեն մինչև տարւոյ տարեկաններ, որք համապատասխանեն պատրաստական դաստան, ըստ որում Ռուսոնական չղիւղածներովը անշուշտ պատրաստականէն սկսելու են ուսումը, իսկ աւելի լինին հասակաւ, ոչ նախախնայութեամբ մէջ կարելի է նըստեցնել դասնը, և ոչ առաջին դասատունը:

Զ. Ինչպէս Ռուսաստանի բոլոր տէրութեան Ռուսոնականները, նըմանապէս և Լազարեան ճեմարանը իւր կանխագրութեան հակառակ զիջումներ չէ՛ կարող ընելու, մանաւանդ թէ վկայականները և խնդրատուութեան ձեւերը ճշտութեամբ կը պահանջէ, ուրեմն պէտք է վերոյիշեալ խորհրդաւոր կէտերուն վրայ առանձինն ուշադրութիւն դարձուի:

Ռուսի կը յանձնարարեմք Ձեզ որ բարեհաճիք Ձեր տեսչութեան ներքե զտնուած թաղային վարժարաններէն և դրսէ վերոյիշեալ հանգամանքներն ունեցող Հայ մանկըտիք որչա՛կ և Ձեր վկայագրով Ռուսոնական Խորհուրդս յղել մինչ ցվերջ փետրվար ամսոյ 1880:

Մնամ յարգանքը

Ազգ. վարչ. Ռուսոն. Խորհրդոյ
Ատենապետ Ատենապետ
Սեֆ. Եղեմեան Պ. Պատրիարք
19 Յունվար 1880
'ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

Դաւաթիւ 29 Յունի 1880

... Խմբագիր:

16 Հոկտեմբեր 1874 թուականաւ կազմուած փոքր Ասիոյ սովետոյ յանձնաժողովս իւր պաշտօնն աւարտած լինելով, ինչպէս որ ի սկզբնէն ի վեր իւր հայրենեան հրատարակած է լրագրաց միջոցաւ, այս անգամ ևս իւր վերջին հաշուեցոյցը պատրաստած լինելով՝ կը փութոյ ներկալ:

Եւ Նորա մի օրինակն յուղարկել Ձեր Մեծապատուութեան և խնդրել որ բարեհաճիք զայն հրատարակել Ձեր պատուական լրագրոյ մեր ձակայ թերթերէն միոյն մէջ, որոյ վրան կանխաւ մեր շնորհակալութիւնը յայտնելով՝ Մնամք յարգանքը

ի Դիմաց փոքր-Ասիոյ

Սովետոյ Յանձնաժողովոյ

Ատենապետ Ատենապետ
Մ. Եսեմեան Յակ. Պ. Նորասեմեան

Վերջին ՀԱՇՈՒՆԾՈՅՑ

Փոքր Ասիոյ սովետոյ յանձնաժողովոյ
Սկսեալ ի 16 հոկտեմբեր 1874 և դաւարեալ ի 23 յունվար 1880

Մատիս պատուական լրագրոյ թիւ 1758 թերթին մէջ 4 նոյեմ. 1878 թուականաւ հրատարակուած հաշուեցոյցի համեմատ ընդամենը հանգանակուած 3763 լիրա Օտ. և 87 զրէն աւելցած և ապահովութեան անտուկին յանձնուած 1. 0. Դ. Փ. զուտարն 505

Ապահովութեան անտուկին 3 անգամու առնուած տոկոս 45 41 75

Պ. վարդան Թադէոսեանի ձեռամբ նպաստ 1 50

Տիւրքի Գ. Սրբար Յովհաննէսեանի կողմէ նպաստ Պ. Սարգիս Հնուցեանցի ձեռամբ 19 20

Սուչովայի Հայոց հոգաբարձութեան նպաստ Սրբազան Պատրիարք Հօր ձեռամբ 25 00 50

Նախորդ հաշուեցոյցին մէջ ցուցած 25 ոսկի ապաւիկէն դանձուած (Խաչիկ Սեւակեանէ) 5

Բարձր. Տ. Տ. Ներսէս Ս Պատրիարքէ 225 Փր.

Վսեմ. Յակոբ Էփ. Նորատուկեանէ 500 »

Մեծ. Էփէնաթ Յարութիւն Գարամաճեան 250 »

Ս. և Ս. Կիւլաշեկեան 130 »

Ս. և Ս. Եսսեան 150 »

Ս. Մանուկ Մանուկեան 100 »

Բարոնց Հայաճեան 100 »

Սեպուհ Մաքսուտեան 50 »

Յովհաննէս Կիւլաշեան 100 »

Փր. 1405 61 15 50

Ստակի տարբերութիւն 12 75

Յանձնաժողովոյ որոշմամբ դանձապետի քով շահու դրուած դուանքին տոկոսը 35 45

495 85 50

Աղքատի մը ֆոնտնորք Տ. 1. 0. Դ. Փ. Հօր հրամանաւ 1

Սուչովայի եկած ստակին համար ծախք 27 25

Վեց աղքատաց ֆոնտնորք Տ. Հօր հրամանաւ 5

Ձեյթունի աղքատի մը » 5

Փոնտնորք Տ. Հօր ուղարկուած իւր նամակաւ 5

Սրբազան Պատրիարք Հօր հրամանաւ և Մանաժողովոյ տնօրէնութեամբ ազգային ստիպողական գործի մը 177

Սրբազան Պատրիարք Հօր հրամանաւ Պայազկոյի, Աշակերտի և շրջակայից սովետոյ բաշխուելու համար, 10 յունվար 1880 թ. ւականաւ ուղարկուած 500

Ս. Պատրիարք Հօր հրամանաւ նոր կարգեալ Սովետոյ կեդրոնաւ և Յանձնաժողովոյ Գանձապետ Սրբ. Էփ. Կիւլաշեկեանի 8 36 25

28 յունի 1880 495 75 50

Ի հաստատութիւն վերողրեալ ցուցակի կ'ստորագրուիք

Ի դիմաց փոքր Ասիոյ սովետոյ յանձնաժողովոյ

Ատենապետ Պ. Ատենապետ

Յակ. Պ. Նորասեմեան Մ. Եսեմեան

Գանձապետ Յովհաննէս Կիւլաշեան

